ՀՐԱՒԷՐ

Ապա՞ց խօսք ու պահանջ լինելով հետաքրքիր բանաւէրներից, որ իւրաքանչիւր գաւառի տեղագրութիւնն առանձին առանձին գրուի և այսպէս բոլորը միայնելով՝ կազմուի մի նահանգի տեղագրութիւն և քանի նահանգաց տեղագրութիւնը գրելով՝ պատրաստուի մի աշխարհի կամ կուսակալութեան տեղագրութիւն, որպէս զի՝ գաւառական գրողները կարողանան մանրամասն և ճիշտ ստորագրել՝ ինչ որ գաւառումն գտնվում է, թէ ժողովրդական կեանքի սովորութեան, լեզուի, աւանդութեան և ամենայն բանի, և առարկայի համար, և թէ այն գաւառումն եղած և պատահած հնութեանց, գործոց, անցից և ամենայն այսպիսեաց համար, ինչպէս ես ևս գրել եմ Նոր-Պայազիտու գաւառի տեղագրութիւնը մանրամասնաբար [1]) և այսպիսի գաւառագիրները՝ ի հարկէ աւելի լաւ է, որ տեղական ուսուցիչները լինին. ըստ որում նոքա առիթ և ժամանակ ունին հարց ու խնդիր լինելոյ ամեն մի բանի համար՝ արձակուրդի պարապ օրերը, եթէ միայն սէր ունին գրելու, նոյնպէս և բանիմաց Քահանայք, եթէ կան ամեն գաւառում։

Այժմ ես յարգոյ ուսուցիչներին յորդոր և խրախոյս կարդալոյ դիտաւորութեամբ, և միանգամայն հրաւիրելոյ դէպի տեղագրական աշխատասիրութիւն՝ գրեցի Համախուռ թեմի միմիայն վանքերի, սրբատեղերի և ուխտատեղերի ստորագրութիւնը, թէ անցեալ դրութեամբն՝ զանազան պատմագրերից առնելով, և թէ ներկայ դրութեամբն՝ անձամբ քանիցս ականատես լինելով, ուստի և ես իրաւամբ կարող եմ կրկնել Եղիշէ պատմագրի խօսքերը թէ «Ոչ ընդ կարծ ոստուցեալ և ոչ 'ի լուր զարթուցեալ, այլ անձամբ 'ի տեղւոջն պատահեցի և տեսի.» քանզի «Վաւ է տեսութիւն աչաց՝ քան զլուր ականջաց։» Յուսամ թէ գրողք՝ մանաւանդ ուսուցիչք հետեւելով իմ օրինակին՝ կաշխատին ամեն ոք իրեն ընակած գիւղի, քաղաքի, գաւառի և նահանգի տեղագրութիւնը գրել և կազմել և տը-

---

[1]) Այս տեղագրութիւնը տպագրուեցաւ անցեալ 1895 թ-ին, անուամբ „Տեղագիր Գեղարքունի գաւառի“ ս. Էջմիածնայ տպարանում։